ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/130

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Փի-Լենդ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Փի-Լենդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Հ. Օհանյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, էլեկտրական սարքավորումների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7375-2021 գրությամբ «Փի-Լենդ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2418-2021 գրության հիման վրա, 11.05.2021թ.-ին «Փի-Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.05.2021թ.-ին:

12.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/130 համարի ծածկագիրը:

18.05.2021թ.-ին, 27.05.2021թ.-ին և 10.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.06.2021թ.-ին:

2. ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.05.2021թ. թիվ ՊՆ/02/2418-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊ ընկերությունը: Վերջինիս կողմից ներկայացված հայտի N 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի (թվային ֆոտոապարատ) տեխնիկական բնութագրում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ սույն ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Սահմանված կարգով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով՝ ոչ ավտոմատ ծանուցմամբ, սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ նշված մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անահամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 03.05.2021թ.-ին կայացած նիստում «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊ ընկերության հայտը՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, գնահատել է անբավարար և մերժել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Փի-Լենդ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն 26.05.2021թ.-ին ներկայացրած թիվ ՊՆ/02/2815-2021 գրությամբ հավելել է հետևյալը.

«Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՅ-ԼՕ-2021/130 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՓԻ-Լենդ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված գրավոր դիրքորոշման վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը իր կարիքների համար էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ), որի մասին հայտարարությունը և հրավերը 16.04.2021թ.-ին հրապարակվել են տեղեկագրում՝ www.procurement.am ինտերնետային կայքում, ինչպես նաև էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգում:

Ընթացակարգի հրավերի 1-ին բաժնի՝ 4.2 կետով հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2021 թվականի ապրիլի 26-ը, ժամը 12:00-ն, իսկ 8.1 կետով սահմանվել է, որ հայտերի բացումը կկատարվի Armeps համակարգի միջոցով՝ նշված օրը և ժամին:

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել նաև «ՓԻ-Լենդ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից): Վերջինիս կողմից ներկայացված հայտի N 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի (թվային ֆոտոապարատ) տեխնիկական բնութագրում, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ Ընթացակարգի հրավերի պահանջների նկատմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջները՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.04.2021թ.-ին որոշել է կասեցնել հայտերի բացման և գնահատման նիստը և առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Սահմանված ժամկետում նշված անհամապատասխանությունները չեն շտկվել, և Մասնակցի հայտը (Ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով) 03.05.2021թ.-ին գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել է՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետի պահանջները:

Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանվել է, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ 43-րդ կետի 1-ին կետով նախատեսված է, որ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակում է տեղեկագրում:

Ընթացակարգի հայտերի գնահատումն ավարտվել է 11.05.2021թ.-ին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում (հաշվի առնելով անհամապատասխանությունների շտկման նպատակով կասեցված մեկ աշխատանքային օրը) և նույն օրը Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը հրապարակվել է տեղեկագրում ու միաժամանակ Armeps համակարգի միջոցով ուղարկվել է հայտ ներկայացրած բոլոր մասնակիցներին:

Վերոգրյալից պարզ է դառնում, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները իրավաչափ են և բխում են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված պահանջներից, ուստի գտնում եմ, որ Մասնակցի՝ վերոնշյալ դիրքորոշմամբ

հայտնած առարկությունները անհիմն են, իսկ ներկայացրած պահանջը ենթակա է մերժման:

Կից ներկայացվում է Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:»:

3. <u>«Փի-Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 12.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «Փի-Լենդ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7375-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 24.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) գրավոր հիմքերի համաձայն, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից «Փի-Լենդ» ՍՊԸ-ին (այսուհետև նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ՝ ՍՑ-LO-2021/130 ծածկագրով ընթացակարգը (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուն ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացրել 05.05.2021թ.-ին ստորագրված գրությունը (այսուհետև նաև՝ Գրավոր հիմքեր): Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում Մասնակցի հայտը 3-րդ չափաբաժնի մասով մերժվել է, քանի որ Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները վերջինիս կողմից չեն շտկվել:

Ուսումնասիրելով Ընթացակարգը նախաձեռնելու համար Պատվիրատուի ներկայացրած Գրավոր հիմքերը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք դրանց դեմ:

1. Գրավոր դիրքորոշման համար էական նշանակություն ունեցող փաստերը

1.1. Պատվիրատուն 16/04/2021թ.-ին www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (այսուհետև նաև՝ Տեղեկագիր) և www.armeps.am էլեկտրոնային համակարգում հրապարակել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետև նաև՝ Մրցույթ): Ի թիվս այլ չափաբաժինների, մասնակիցը Մրցույթի 3-րդ չափաբաժնի (այսուհետև նաև՝ Գնման առարկա) մասով ներկայացրել է հայտ (այսուհետև նաև՝ Հայտ):

1.2. Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 26.04.2021թ.-ի ժամը 12:00-ին: Հայտերի բացման՝ 26.04.2021թ.-ի ժամը 12:00-ի նիստի վերաբերյալ արձանագրություն Տեղեկագրում չի հրապարակվել և չի ուղարկվել Մասնակցին:

1.3. Հայտում արձանագրված «անհամապատասխանությունները» շտկելու վերաբերյալ ծանուցումը (այսուհետև նաև՝ Ծանուցում) Մասնակիցը էլեկտրոնային փոստի միջոցով ստացել է 28.04.2021-ին: Ծանուցմամբ նշված էր որ. « (...) Հայտի N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում թերի է լրացված տվյալ ապրանքի համար սույն ընթացակարգի հրավերով պահանջվող՝ եռոտանի տեղադրման հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ բացակայում է «հնարավորություն» բառը:

Հայտի N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում բացակայում է տվյալ ապրանքի համար սույն ընթացակարգի հրավերով պահանջվող՝ «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» տեղեկատվությունը: (...)», ելնելով նշյալից Մասնակցին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները և շտկված տեխնիկական բնութագիրը ներկայացնել a.sahakyan@mil.am էլեկտրոնային փոստին:

1.4. Հայտում տեղ գտած «անհամապատասխանությունները» եղել են տեխնիկական վրիպման արդյունք, մասնավորապես՝ հայտը սկանավորելուց՝ վրիպման պատճառով չեն սկանավորվել «հնարավորություն» և «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» արտահայտությունները: Մասնակցի հավելված 1.1 ուսումնասիրելուց դա անգամ անզեն աչքով է երևում:

1.5. Մասնակցի հայտում «անհամապատասխանություններ» արձանագրելու և մասնակցի հայտը մերժելու վերաբերյալ որոշումները արձանագրվել են՝ 28.04.2021թ.-ի թիվ

4 արձանագրությամբ: Ընդ որում՝ թիվ 4 արձանագրությունը Մասնակցին է ուղարկվել 04.05.2021թ.-ին, իսկ Տեղեկագրում հրապարակվել է 11.05.2021թ.-ին:

1.6. 17.05.2021թ-ին Վարդանանց ՆԲԿ-ի կողմից տրված ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքի համաձայն՝ Գևորգ Մնացականյանը (Մասնակցի տնօրենը) 26.04.2021թ.-ին Վարդանանց ՆԲԿ-ում անցել է հետազոտություններ և մասնագետների խորհրդատվություններ, որոնց արդյունքում վերջինիս մոտ դրվել է նոր կորոնավիրուս ախտորոշումը, որի կապակցությամբ նա 26.04.2021թ.-ից գտնվել է 14 օր ինքնամեկուսացման մեջ:

2. Պատվիրատուի Գրավոր հիմքերի դեմ առարկության հիմքերը և փաստարկները.

2.1. Ծանուցումը և արձանագրությունները կազմելու ու ուղարկելու մասին.

Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք).

33-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 4-րդ կետի, 3-րդ մասի 5-րդ կետի և 8-րդ մասի համաձայն՝

«1. Հայտերը բացվում են հրավերում նշված օրը, ժամին և վայրում՝ հայտերի բացման նիստում: (...):

2. Հայտերի բացման նիստում հրապարակվում են՝

4) տեղեկություններ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին.

3. Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն, (...): Արձանագրությունն ստորագրում են գնահատող հանձնաժողովի նիստին ներկա անդամները: Արձանագրությունը պարունակում է՝

5) տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

8. Հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում: (...) սույն մասով նախատեսված արձանագրությունը հայտերի բացման նիստին հաջորդող առաջին աշխատանքային օրն ուղարկվում է հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին:»:

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև նաև՝ Կարգ).

41-րդ կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ (...), ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

26-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերի համահամաձայն՝ Գնահատող հանձնաժողովի՝ գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը:

Վերոգրյալ նորմերից հետևում է, որ հայտերի բացման նիստի օրը և ժամին հրավիրվում է հայտերի բացման վերաբերյալ գնահատող հանձնաժողովի նիստ: Հանձնաժողովի նիստերը պարտադիր կերպով ենթակա են արձանագրման, այսինքն՝ յուրաքանչյուր նիստի, այդ թվում՝ հայտերի բացման, վերաբերյալ անհրաժեշտ է կազմել արձանագրություն, որը ստորագրում են գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը: Հայտերի բացման նիստում, ի թիվս Օրենքով սահմանված այլ գործողությունների, գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների ներկայացրած հայտերի համապատասխանությունը տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Եթե գնահատման արդյունքում Մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հայտերի բացման նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և նույն օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը ծանուցում է Մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նշյալից հետևում է, որ հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը գնահատող հանձնաժողովը գնահատում է մասնակիցների հայտերը և, եթե հայտերում արձանագրվում են հրավերի պայմանների նկատմամբ անհամապատասխանություններ, ապա գնահատող հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով կասեցվում է և հանձնաժողովի քարտուղարը հրավերում նշված հայտերի բացման նիստի օրը արձանագրված անհամապատասխանության մասին ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև

կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Ուստի, եթե հայտերի բացման նիստի օրը մասնակիցը չի ծանուցվում իր հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանության վերաբերյալ, ապա վերջինիս մոտ առաջանում է օրինական ակնկալիք առ այն, որ իր ներկայացրած հայտը համապատասխանում է տվյալ գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին: Որպիսի պայմաններում, ելնելով որոշակիության սկզբունքից՝ հայտերի բացման նիստից հետո մասնակցի հայտում հրավերի նկատմամբ անհամապատասխանություններ պետք է չարձանագրվեն:

ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումներից հետևում է, որ օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքները իրավական պետությունում՝ որպիսին է Հայաստանի Հանրապետությունը, ենթակա են պաշտպանության, այդ մոտեցումը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, Մրցույթի հայտերի բացման նիստը նշանակված էր 26.04.2021թ.-ի ժամը 12:00-ին: Հայտում հրավերի նկատմամբ տեղ գտած անհամապատասխանությունների վերաբերյալ ծանուցում հայտերի բացման նիստի օրը՝ 26.04.2021թ.-ին Մասնակիցը չի ստացել: Որպիսի պայմաններում մասնակցի մոտ առաջացել է օրինական ակնկալիք, որ իր հայտը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին: Ուստի, ՀՀ սահմանադրական դատարանի որոշումներով (ՍԴՈ-1142, ՍԴՈ-1148, ...) արտահայտված իրավական դիրքորոշումների համաձայն՝ այդ ակնկալիքները Հայաստանի Հանրապետությունում ենթակա են պաշտպանության, որը պետք է դրսևորվի Ընթացակարգը մերժելով, քանի որ Մասնակցի հայտում արձանագրված «անհամապատասխանության» վերաբերյալ ծանուցումը Մասնակցին ուղարկվել է՝ հայտերի բացման նիստին հաջորդող 2-րդ օրը: Այսինքն՝ Պատվիրատուն չպահպանելով՝ ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 41-րդ կետով սահմանված նորմերը դրսևորել է կամայականություն՝ խախտել է իրավական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքները, ինչի արդյունքում Մասնակիցը հայտնվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առաջ: Ուստի, ելնելով իրավական պետությունում օրինական ակնկալիքների իրավունքի և որոշակիության սկզբունքների պաշտպանության անհրաժեշտությունից կարծում ենք, որ սույն Ընթացակարգը անհրաժեշտ է մերժել:

Ավելին, մինչև այսօր հայտերի բացման՝ 26.04.2021թ.-ի նիստի վերաբերյալ գնահատող հանձնաժողովի արձանագրությունը Մասնակիցը չի ստացել: Այդ արձանագրությունը նաև հրապարակված չէ Տեղեկագրում: Իսկ 28.04.2021թ.-ի թիվ 4 արձանագրությունը Մասնակիցը ստացել է 04.05.2021թ-ին: Նշյալից ողջամտորեն ենթադրելի է, որ հայտերի բացման նիստի օրը՝ հայտերի բացման նիստի վերաբերյալ արձանագրություն չի կազմվել: Այսպիով, գնահատելով Մրցույթի նիստերի վերաբերյալ արձանագրություններ կազմելուն և արձանագրությունները ուղարկելուն ուղղված Պատվիրատուի գործողությունները և անգործությունը կարող ենք փաստել, որ Պատվիրատուն խախտել է Կարգի 26-րդ կետի 2-րդ, 5-րդ ենթակետերը և Օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ մասի 4-րդ կետը, 3-րդ մասի 5-րդ կետը և 8-րդ մասը:

Ցանկանում ենք նաև նշել Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մի շարք որոշումներ, որտեղ Կարգի 41-րդ կետի խախտմամբ կազմակերպված գնման գործընթացների շրջանակներում Ցուցակում մասնակցիներին ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգերը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը մերժել է: Ելնելով վերոգրյալից, կարծում ենք, որ այս Ընթացակարգի շրջանակներում անհրաժեշտ է կիրառել սույն դիրորոշման մեջ նշված Բողոքներ քննող անձի նախկինում կայացրած որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները և մեկնաբանությունները, ու Մասնակցին Ցուցակում ներառելու Ընթացակարգը մերժել:

2.2. Հայտում տեղ գտած «անհամապատասխանության» և «անհամապատասխանությունը» շտկելու անհնարինության մասին.

Ինչպես երևում է սույն գործի փաստական հանգամանքներից, հայտում տեղ գտած «անհամապատասխանությունները» եղել են տեխնիկական վրիպման արդյունք, մասնավորապես՝ հայտը սկանավորելուց՝ վրիպման պատճառով չեն սկանավորվել «հնարավորություն» և «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» արտահայտությունները: Մասնակցի հավելված 1.1 ուսումնասիրելուց դա անգամ անզեն աչքով է երևում: Բացի այդ, 26.04.2021թ.-ից Գևորգ Մնացականյանը (Մասնակցի տնօրենը) 14 օր գտնվել է ինքնամեկուսացման մեջ, քանի որ վերջինիս մոտ դրվել է նոր կորոնավիրուս ախտորոշումը: Հետևաբար, Ծանուցումը ուղարկելու օրը՝ 28.04.2021թ.-ին Գևորգ Մնացականյանը օբյեկտիվ պատճառով (գտնվում էր ինքնամեկուսացման մեջ) չի ունեցել հայտը շտկելու հնարավորություն: Նշյալից կարող ենք փաստել, որ Մասնակիցը չի ունեցել գնման գործընթացում ստանձնած պարտավորություն խախտելու նպատակ, այլ հակառակը՝ վերջինիս գործողությունները ուղղված են եղել Մրցույթին պատշաճ

մասնակցելուն, սակայն իրենից անկախ պատճառներով Մասնակիցը չի կարողացել այդ գործողությունները հասցնել իր տրամաբանական ավարտին:

3. Ամփոփելով վերոգրյալ փաստական և իրավական հանգամանքները կարծում ենք, որ Ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը Ցուցակում ներառման ենթակա չէ:»:

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 50-րդ հոդվածով՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է ամբողջությամբ մերժել ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից «Փի-Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված՝ ՍՑ-LO-2021/130 ծածկագրով ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2021/130 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով 16.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Փի-Լենդ» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.04.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.3-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ «Փի-Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի N 1.1 Հավելվածում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում)՝ 3-րդ չափաբաժնով (թվային ֆոտոապարատ) առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում, թերի է լրացված տվյալ ապրանքի համար սույն ընթացակարգի հրավերով պահանջվող եռոտանի տեղադրման հնարավորության վերաբերյալ տեղեկատվությունը, մասնավորապես՝ բացակայում է «հնարավորություն» բառը, ինչպես նաև բացակայում է «թվային ֆոտոապարատին հիշողության քարտ առնվազն 16 գ/բ» տեղեկատվությունը:

iv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, 28.04.2021թ.-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել է վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

v. Հանձնաժողովի քարտուղարը 28.04.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով Մասնակցի tender@p-land.am էլ. փոստի հասցեին է ուղարկել նույնաբովանդակ ծանուցում:

vi. Հանձնաժողովի, 03.05.2021թ.-ի նիստի, թիվ 4 արձանագրության 2.4-րդ կետի համաձայն՝ 03.05.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Փի-Լենդ» ՍՊԸ-ն որևէ փաստաթուղթ չի ուղարկել քարտուղարի էլեկտրոնային փոստին: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ Հանձնաժողովը որոշել է «Փի-Լենդ» ՍՊԸ-ի հայտը՝ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով, գնահատել անբավարար և մերժել:

vii. «Վարդանանց» ՆԲԿ-ի կողմից 17.05.2021թ.-ին տրված ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքի համաձայն՝ Գևորգ Մնացականյանը (Մասնակցի տնօրենը) 26.04.2021թ.-ին «Վարդանանց» ՆԲԿ-ում անցել է հետազոտություններ և մասնագետների խորհրդատվություններ, որոնց արդյունքում վերջինիս մոտ ախտորոշվել է նոր կորոնավիրուս:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7375-2021 գրությամբ «Փի-Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը

դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ

բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է և այդ կետի իմաստից բխում է, որ հայտում ներառվող փաստաթղթերում արձանագրված՝ շտկման ենթակա անհամապատասխանություններն ենթակա են շտկման՝ հանձնաժողովի քարտուղարի կողմից Մասնակցին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցման ստացման պահից հաշված մեկ աշխատանքային օրյա ժամկետում:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելվել նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումն իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը(ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Օրենսդիրը, արձանագրված անհամապատասխանությունների շտկում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 1 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ արձանագրված անհամապատասխանությունների շտկելու պարտավորությունը: Ուստի սահմանված պատասխանատվության միջոցները կարող են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հրաժարվելու մասին:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են հանձնաժողովի քարտուղարի գործողությունները, որոնք պետք է իրականացվեն մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների դեպքում, այն է՝ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը, ինչպես նաև մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 41-րդ կետի դրույթների իմաստից բխում է, որ մասնակցի ներկայացրած հայտը

գնահատվում է բավարար այն դեպքում, երբ այն համապատասխանում է հրավերով նախատեսված պայմաններին:

Հարկ է նկատել նաև, որ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթների վրա հասնելու (կիրառելու) հանգամանքը գործադիրը պայմանավորել է հրավերի պահանջների նկատմամբ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունների հանգամանքով: Այլ կերպ ասած՝ նախ անհրաժեշտ է արձանագրել անհամապատասխանություն, ապա դրանից հետո նոր առաջարկել կատարելու շտկում:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: **Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:**

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ

նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից էլեկտրական սարքավորումների ձեռքբերման նպատակով 16.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-3/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Փի-Լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 28.04.2021թ.-ին Մասնակցին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին նույնաբովանդակ ծանուցում: 03.05.2021թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ սահմանված ժամկետում «Փի-Լենդ» ՍՊԸ-ն որևէ փաստաթուղթ չի ուղարկել քարտուղարի էլեկտրոնային փոստին, ինչով պայմանավորված Մասնակցի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով «Վարդանանց» ՆԲԿ-ի կողմից 17.05.2021թ.-ին տրված ամբուլատոր բժշկական քարտից քաղվածքը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հանգամանքը պայմանավորված է եղել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է՝ հիմք ընդունելով այն, որ Գևորգ Մնացականյանը (Մասնակցի տնօրենը) 26.04.2021թ.-ին «Վարդանանց» ՆԲԿ-ում անցել է հետազոտություններ և մասնագետների խորհրդատվություններ, որոնց արդյունքում վերջինիս մոտ ախտորոշվել է նոր կորոնավիրուս:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը

ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Վերոնշյալներով իրավական և փաստական հանգամանքերի հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման ընթացակարգով կամ պայմանագրով նախատեսված և ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից մասնակցի կողմից ներկայացված հայտը մերժելուն կամ պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Փի-Լենդ» ՍՊԸ-ի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների չկատարման հանգամանքն ելել է օբյեկտիվ հիմքերից՝ Մասնակցի տնօրենի մոտ նոր կորոնավիրուս հիվանդության ախտորոշմամբ

պայմանավորված, ինչն օբյեկտիվորեն անհնարին է դարձրել Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը՝ վերջինիս կամքից անկախ հանգամանքներով:

Ուստի, վերոնշյալների հաշվառմամբ, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7375-2021 գրությամբ «Փի-Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/130 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**